Աւագ Հինգշաբթի, 20 Ապրիլ 2000, Սրբոց Վարդանանց Եկեղեցւոյ մէջ, Նաւարման Գիշերուան ժամերու ընթացքին պիտի սկսի երեկոյեան ժամը 7:00ին:
Պիտի նախագահէ եւ պիտի քարոզէ՝ ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱԶԵՐԵԱՆ
(Բարեջան Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմին)
Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը:
Իսկ Աւագ Ուրբաթ օրը, կէսօրէ ետք ժամը 4:00ին պիտի կատարուի Կարգ Թաղման եւ Թափօր:
ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՀԱԼԷՊ ՀԱԼԷՊ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Հայկական Յեղասպանութեան 85ամեակի Ոգեկոչման Կեդրոնական Մարմինի յառաջացուցած դէպի Մարկատէ եւ Տէր Զօր ու Ռեխտագնացութեան կազմակերպիչ յանձնախումբը, այս յայտարարութեամբ մեր համայն ժողովուրդին, առ ի գիտութիւն կը փոխանցէ ուխտագնացութեան մասին հետեւեալ գործնական տեղեկանքը:
Բարձր Հովանաւորութեամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Մեծի Տանն Կիլիկիոյ, համաժողովրդային ուխտագնացութիւն տեղի պիտի ունենայ 24 Ապրիլ 2000, Երկուշաբթի վաղ առաւօտեան, դէպի Մարկատէ եւ Տէր Զօր:
- Ուխտաւոր մեր ժողովուրդը անհրաժեշտ է, որ մասնակցութեան մասին արձանագրութիւն կատարէ հետեւեալ կեդրոններէն մէկուն մէջ անպատճառ, 12 Ապրիլ 2000էն մինչեւ 19 Ապրիլ 2000, Չորեքշաբթի երեկոյեան:
Արձանագրութեան կեդրոններ՝
●Ս. Զառ. Մանկանց Մ. Եկեղեցւոյ թղ. գր. հեռ. 2246258
●Ս. Աստուածածին Եկեղեցւոյ թղ. գր. հեռ. 4646352
●Ս. Գերոց Եկեղեցւոյ թղ. գր. հեռ. 4650288
●Ս. Գր. Լուսաւորիչ Եկեղեցւոյ թղ. գր. հեռ. 4644040
●Շ. Ե. Միութեան ակումբ, Թիլիզ հեռ. 2213350
●Ն. Ս. Ս. Միութեան ակումբ հեռ. 2242043
●Թ. Մ. Միութեան ակումբ հեռ. 2211905
●Շ. Բ. Ը. Միութեան կեդրոն հեռ. 2248930
- Մասնակցութիւնը պիտի ըլլայ անվճար:
- Մեկնումի վայր եւ ժամ՝ Ս. Աստուածածին Եկեղեցի, Ա. Ս. Ժ. Տուն, 24 Ապրիլ 2000, առաւօտեան ժամը 6:30ին:
ՌԻՄՏԱԳԼԱՅՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ՅԱՆՁՆԱՄՈՒՍԲ

### ՀՐՈՅՑ՝ ՊԱՏՄԱԲԱՆ ԻՎ ԹԵՌՆՈՆԻ ՇԵՏ

# «ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԶՈՒՄԸ ԲԱՅԱՐՁԱԿ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՆ Է»

Ընթերցողը տեղեակ է, որ Կիլիկիոյ կաթողիկոսութեան կազմակերպած «Հայկական Յեղասպանութեան այժմեականութիւնը» ձեռնարկին առիթով անցեալ շաբաթ Լիբանան կը գտնուէին ֆրանսացի պատմաբան Իվ Թեռնոն Եւ Յ. Յ. Արեւմտեան եւրոպայի Հայ Դատի Պաշտպան Յանձնարարութիւնի ատենապետ Արա Գրիգորեան:

«Ազդակ» հարցազրոյցներ ունեցաւ անոնցմէ իւրաքանչիւրին հետ՝ արծարծելով Հայկական Յեղասպանութեան ճանաչման եւ այդ գծով քաղաքական ու պատմաբանական աշխատանքներու վերաբերող հարցեր:

Իվ Թեռնոն, որ պատմաբան է եւ վիրաբուժ, շուրջ 30 տարիներ է վեր կ'ուսումնասիրէ Հայկական Յեղասպանութիւնը եւ անոր ճանաչման հարցին զանազան երեսները: Ան գիրքեր եւ բազմաթիւ յօդուածներ հրատարակած է Յեղասպանութեան եւ ուրացումի հարցերուն շուրջ. անոր գիրքերէն է «Հայերը. Յեղասպանութեան մը պատմութիւն» (1977), «Հայկական Հարցը» (1983), «Ընդունութիւն» Յեղասպանութեան մը ուրացումին շուրջ» (1989), «Ուրացումի մասին» եւ այլն: Ինչպէս իր գիրքերուն, յօդուածներուն ընդմէջէն, անոր հետ մեր գրոյցին ընթացքին ճան, Իվ Թեռնոն Հայկական Յեղասպանութիւնը եւ անոր ուրացումը ներկայացուց իբրեւ գերազանցապէս մարդկային հարց մը, որուն ճանաչումը անհրաժեշտ է ոչ միայն հայութեան, այլեւ՝ Թուրքիոյ եւ մարդը աշխարհին համար:

Ստորեւ կը ներկայացնենք Իվ Թեռնոնին հետ մեր գրոյցը մարդու յարգանքներ (Արա Գրիգորեանին հետ մեր հարցազրոյցը պիտի տանք «Ազդակ»-ի Ուրբաթ, 21 Ապրիլի թիւով):

**ՀԱՄԻՆՈՒՄ.** - Առաջին հերթին, կրնա՞ք մեզի պատմել ձեր «ուղեւորութիւնը» Հայ Դատի եւ Հայկական Յեղասպանութեան ընդմէջէն:

Իվ Թեռնոն. - Ես մասնագիտութեամբ վիրաբուժ եմ: Նախ ուսումնասիրած եմ Բ. Աշխարհամարտին ընթացքին հերթերու կեդրոնացման ճամբարներուն մէջ նացի բժիշկներուն գործառնականութիւնը: Այն աշխատանքին շնորհիւ է, որ ես հասկցայ. թէ ի՞նչ կը նշանակէ մարդկութեան դէմ ոնկր եւ ցեղասպանութիւն: 1972-ին սկսեալ է. որ նետաքրքրեցայ Հայկական Հարցով: Ես հայ չեմ. բայց կ'ուզէի ծանօղելու Ա. Աշխարհամարտի անցուդարձերը: Այդ օրերուն ոչ հայ մարդիկ չկային այս հարցով նետաքրքրուող: շատ լաւ ընդունելութիւն գտայ նախորդին մօտ եւ կարելի է ըսել. որ «միտոսեցայ»: Հայկական Հարցին մէջ: Յեղասպանութեան վերաբերեալ գիրք մը գրեցի եւ ան աւելի քան 25 տարի է ի վեր կ'ուսումնասիրեմ Հայկական Յեղասպանութիւնը:

**Հ.** - Ձեր գրութիւններուն մէջ գրայի է, որ Հայ Դատը կր յերկայացնէ իրեն համամարդկային հարց:

Պ. - Ճիշդ է եւ կը կարծեմ. թէ այդ մօտեցումը նիւթակալ է: Յանախ իւրաքանչիւր դատ կը սանձաւանձաբար տուեալ համայնքով, ժողովուրդով կամ քաղաքական շրջանակով: Սակայն կայ հասարակաց դատ մը՝ մարդկային իրաւանց հարցը. եւ երբ տեղի կ'ունենայ 1915-ի եղիտիւնի նման դէպք մը. ամբողջ մարդկութիւն է. որ կը վիրաւորուի: Պատմաբան մը անշուշտ պէտք է ըլլորէ որոշ ժամանակաշրջան մը. սակայն այդ հարցին ընդմէջէն (իմ պարագային՝ Հայկական Յեղասպանութեան) ամբողջ մարդկութեան նապաստանը հարուածներն են. որոնք կը վերլուծուին:

**Հ.** - Ձեր գիրքերէն մէկուն մէջ կ'ըսէք. «Թուրք պետութիւնը ոչ միայն կ'ուրանայ երիտօրէրներուն գործած Յեղասպանութիւնը (...). այլեւ ոչ մէկուն զայն հաստատելու իրաւունք կու տայ»: Այս հաստատումը հետաքրքրական է ուրացողական քաղաքականութեան առումով: Ձե՞ք կարծիք, որ Թուրքիան այս ձեւով կ'ուրա-

նայ նաեւ ինքն իր պատմութիւնը:

Պ. - Թուրքերը փակուած են ուրացումի գործընթացի մը մէջ. որ իրենց կը վնասէ. սակայն իրենք տակաւին չեն անդրադառնար այս իրողութեան. իրենց ինքնութիւնն է. որ հարցականի տակ կ'առնուի: Երբ ժողովուրդ մը չի կրնար իր պատմութիւնը ընդունիլ. անկախ անկարող կը դառնայ իր ինքնութեան պատասխանատուութիւնը ստանձնելու: Ես կը կարծեմ. որ Հայկական Յեղասպանութեան, ինչպէս նաեւ բուրք պատմութեան այլ հանգրուաններու ուրացումով Թուրքերը իրենք իրենց կը վնասեն, այսինքն իրենց պատմութեան վերաբերեալ կը ստեղծեն առասպելական եւ սուտ պատկեր մը. ժողովուրդ մը միշտ պէտք է ընդունի եւ իր մեծութիւնը, եւ իր սխալները: Յստակ է. որ այս չէ Թուրքերուն պարագան: Թրքական կառավարութիւնները Թուրքիոյ դարձուած պատկեր մը կը փոխանցեն իրենց ժողովուրդին:

**Հ.** - Ի՞նչպէս կը տեսնէք անցնող դարաշրջանին ընթացքին մարդկութեան մօտեցումներուն հոլովութիւնը՝ ազգային դատերու նկատմամբ: Քաղաքական եւ պատմական ի՞նչ վերլուծում կը կատարէք այն իրողութեան, որ մարդկութիւնը եւ մեծ պետութիւնները տակաւին չեն ճանչնար Հայկական Յեղասպանութիւնը:

Պ. - 20րդ դարը անկիւնադարձային «պահ» մըն էր: Մենք տեսնեց ճեղքասպանութիւններու բազմապատկումը եւ միաժամանակ՝ Մարդկային Իրաւանց գարգացումը: 20րդ դարու ամբողջ ուղեւորութեան ընթացքին արհաւիրքը անցաւ եւ միաժամանակ ծնաւ սրբագրումի շարժումը՝ միջազգային օրէնքներու գարգացումով: Այսպէս կ'ուրուագծուի 21րդ դարու պայքարը, որ Յեղասպանութեան դէմ պայքարին պարագային կ'ամփոփուի երկու բառերու մէջ՝ կանխարգիլում եւ ճշգրտում: Այս երկու եզրերը, որոնք գործածուեցան 1948-ի հռչակագրին մէջ, հարցին բանալիներն են. կարեանք կանխարգիլել ոնկրները եւ պատժել ոնկրագործները: Անշուշտ կարելի չէ պատժել հայերը սոյանունովները, որովհետեւ անոնք մահացած են. այսուհանդերձ, նախկին Եուրոպայի տղայ, Բուրնա, ոնկրներուն նամար կ'ազմուող դատական ատենակներու եւ Միջազգային Ոնկրագատ ատենակ կ'ազմութիւնը միայն ձեւ է՝ խուսափելու համար շարդերու կրկնութեան: Անհրաժեշտ է. որ մարդասպանները, սրբագործները հասկնան. որ իրենք պաշտպանուած չեն եւ ոչ ալ՝ անպատժելի:

Արդ, 20րդ դարու բոլոր ճեղքասպանութիւններուն պարագային. ոնկրագործները վստահ էին. որ իրենց ոչ մէկ վտանգ կը սպասուար: Անոնք պաշտպանուած էին իրենց կառավարութիւններու կողմէ: Հետեւաբար. երբ եուրոպայ մը, ռուստացի մը կամ իւրուար մը կը ձեռքաւարուի ոնկրի համար. կը նշանակէ, որ փոփոխութիւն մը տեղի կ'ունենայ: Կարելի է ըսել. որ երբ այս գործընթացը սկիզբ առնէր Ա. Աշխարհամարտի աւարտին, այսինքն՝ երբ Սեւրի դաշնագիրը կիրարկուած ըլլար, մօտեցումները կը փոխուէին. եւ Հայկական Յեղասպանութեան յաջորդող նմանօրինակ ոնկրներու առաջը կ'առնուէր:

**Հ.** - Ինչպէ՞ք, որ Հայկական Յեղասպանութիւնը իրագործողները կարելի չէ պատժել, որովհետեւ անոնք մահացած են: Հետեւաբար Հայկական Յեղասպանութեան ճանաչման աշխատանքը կը տարուի: Հիմնականօրէն ուսումնասիրութիւններուն ճամբով: Արդե՞ք, ուստի ձեզի, այս պայքարը հետզհետէ պիտի վերածուի ակադեմական շրջանակներու լռանակին:

Պ. - Ո՛չ, այս պայքարը երբեք զուտ ակադեմական բնույթ չի կրնար ունենալ: Երբ կարելի չէ ոնկրագործները պատժել, նուազագոյնը կարելի է իրականութիւնը ըսել: Կը կարծեմ. որ ուրացումը նաեւ ոնկր մըն է. անկախ մաս կը կազմէ Յեղասպանութեան: Յեղասպանութիւնը ուրանալով թրքական կառավարութիւնները իրենք գիրքեր կը գետեղեն ոնկրին շրջագծէն ներս. նոյնպէս, Յեղասպանութեան ուրացումը կառուութեան համար երկրորդ մահուան կը նմանի, շարունակուող մահուան: Մեռելները պէտք է բաղուին. երբ կարելի չէ զանոնք ֆիզիքապէս բաղել, պէտք է առնուազն կարեւոր մտքով բաղել. ուրացումը կ'արգիլէ այս սուգին ամբողջացումը: Այսպէս է. որ ոնկրային գործընթացը կը շարունակուի, նոյնիսկ երբ շարդ տեղի չ'ունենար:

**Հ.** - Ի՞նչպէս կը տեսնէք Հայութեան կեցուածքը այս ուրացումին դէմ յանդիման:

Պ. - Այն շրջանակներուն մէջ, որոնց ծանօթ եմ, կրնամ ըսել, որ հայերը ամբողջովին միակամ կեցուածք ունին այս գծով: Ինչպէս գիտեք, Ֆրանսայի մէջ Ապրիլ 24-ի Յանձնարարութիւնը կը համարուի բոլոր հոսանքները:



Մանօր ըլլալով կուսակցութիւններու եւ մտածելակերպերու զանազան հակադրութեանց կրնամ հաստատել, որ Հայկական Յեղասպանութիւնը միացման ազգակ մըն է: Բոլոր անոնք, որոնք իբրեւ հայ կ'ապրին, կայուած կը գգան Յեղասպանութեան հարցին: Մահաւանդ այսօր. երբ ուրացողական քաղաքականութիւնը հետզհետէ աւելի նեղ կը դառնայ:

**Հ.** - Կր կարծէ՞ք, որ Հայութեան մօտեցումին եւ կեցուածքին մէջ կայ պակաս մը՝ ինքնարժեքներուն եւ ինքնահաստատումի իմաստով:

Պ. - Իրաւունք ունիք: Կը կարծեմ, որ կայ մահաւանդ ծանօթութիւններու, տեղեկութիւններու պակաս մը: Երբ հայերը կ'ուզեն իսկապէս մասնակցել Յեղասպանութեան ճանաչման գործընթացին, ամէն բանէ առաջ անհրաժեշտ է, որ անոնք իմանան դէպքերու մանրամասնութիւնները: Տիրուր է այս մէկը ըսել, բայց մեծ է թիւը այն հայերուն, որոնք չեն գիտեր, թէ ճիշդ ի՞նչպէս պատրաստուեցաւ 1915-ի եղիտը, ի՞նչ տեղի ունեցաւ 1915-1916 թուականներուն եւ հետագային: Ըստ իս, Օսմանեան Կայսրութեան շրջանի հայոց պատմութեան մանրամասնութիւններուն իրագրել ըլլալ անհրաժեշտ է՝ ինքնագիտակցումի համար:

**Հ.** - 1965 թուականին Հայութիւնը մէկ կողմ գրաւոր իրաւունքները պահանջատէր կեցուածք որդեգրեց: Զինեալ պայքարի հանգրուանէն ետք, այսօր Հայութիւնը կը գտնուի խոր կացութեան մէջ: Ի՞նչ է ձեր կարծիքը նշեալ անցումներուն եւ ներկայ իրավիճակին գծով:

Պ. - Ես այդպէս 1965-ի անցումային շրջանը: Առաջին հետք. որ ես չփման մէջ մտայ հայութեան հետ. Ապրիլ 24-ը տակաւին լացի օր էր. կը տեսնէի իբր արհաւիրքը ներկայացնող բեմականացումներ... սակայն այս ողբը արդիւնք չէր տար: Կը կարծեմ. որ առաջին գիտակցումը տեղի ունեցաւ Յեղասպանութեան 50ամեակին ըլլալ Խորհրդային Հայաստանի մէջ. ըլլալ Սփիւռքի: Այս գիտակցումը ստեղծեց իր ուսմ մը եւ հաստատուեց մը: Այս. եղաւ նաեւ 1975-1983 ժամանակահատուածը, որ կը կոչուի «գլխին-բալ պայքարի շրջան». եւ որ ունեցաւ իրեն յատուկ դժուարութիւնները. բայց հայերը այլեւ չէին հանդուրժեցր նուատացումը: Կը կարծեմ, որ ներկայիս հայութիւնը համոզուած է, որ անհրաժեշտ է դիւանագիտական պայքար մղել: Հայութիւնը այդ աշխատանքը կատարելու միջոցները ունի եւ առաւել յարթելու վստահութիւնը:

**Հ.** - «Հայկական Յեղասպանութեան այժմեականութիւնը» գրքին ձեր յօդուածին մէջ գրուած է, որ փաստաթուղթերու ընդունելութեան մասին: Կրնա՞ք մանրամասնել:

Պ. - Պատմաբան մը կը զբաղի իրականութեան բացայայտումով: Հետեւաբար իր տեղեկութիւնները կարելի է նաեւ փաստաթուղթերէ. որոնք պէտք է վերլուծուին քննական մօտեցումով. այսինքն՝ կարելի է համոզուած ըլլալ, որ փաստաթուղթ մը վաւերական է. բայց անկախ կրնայ ընդունելի չըլլալ: Այս է պարագան Անտոնեանի փաստաթուղթերուն (ծանօթեթերկրամերը), որոնք հիմնաւորած են Ապրիլ 24-ի յիշատակութեան ձեւակերպումը:

Ես անձնապէս համոզուած եմ, որ անոնք վաւերական են, սակայն անոնք լաւապէս չեն ներկայացուած Անտոնեանի կողմէ (որ պատմաբան մը չէր), այդ փաստաթուղթերը անհետացած են: Կը կարծեմ, որ տակաւին չգործածուած այնքան փաստաթուղթեր կան, որ կարիքը չկայ օգտագործելու «անընդունելի» փաստեր: Պէտք է ըսել իրականութիւնը այնպէս, ինչպէս որ կը ներկայանայ անկախ, եւ ինչպէս որ ուսումնասիրութիւնները կը բացայայտեն:

Գրքին մէջ նշուած է, որ ներկայիս վերանաւազմելի են Կիւրթիւնի Լեփսիուսի քաղաքական դիրքորոշումը գերման իշխանութիւններուն նկատմամբ, Ա. Աշխարհամարտի ընթացքին: Այս մէկը չի նշանակել, որ Լեփսիուսի հրապարակումները սխալ էին, այլ այն, որ Լեփսիուս կը գտնուէր կացութեան մը մէջ, որ քաղաքական առումով անկախ չէր: Այս է հարցը. պէտք է աշխատիլ հարցերը իրենց ծիրէն ներս տեղաւորելու համար:

Հայկական Յեղասպանութեան վերաբերեալ

փաստաթուղթերու վրայ 25 տարի աշխատելէ ետք կրնամ հաստատել. որ բնաւ չեմ հանդիպած հակառակ ուղղութեամբ գացող իսկական վաւերաբուրի. չեմ խօսիր բուրքերու կողմէ պատրաստուած «փաստաթուղթերու» մասին: Բոլոր ուսումնասիրութիւնները, բոլոր փաստաթուղթերը կը հաստատեն Յեղասպանութիւնը:

Ուրացումը հակասակաւորէն դրական ազդեցութիւն ունեցաւ. ուրացումը դրոյց պատմաբանները, որոնք աւելի մեծ թիւով ուսումնասիրութիւններ կատարեցին, եւ անոնց բոլոր աշխատանքները կ'ըսեն Հայկական Յեղասպանութեան իրականութիւնը:

Հետեւաբար կը կարծեմ, որ պէտք է մէկ կողմ դնել այն փաստաթուղթերը, որոնք ընդունելի չեն:

**Հ.** - Ուրեմն դուք կ'ըսէք, որ երբ ուրիշներուն հետ կը խօսինք, կարելի է առարկայական ներկայացման ձեւ որդեգրել:

Պ. - Այո, եւ փաստաթուղթերը չընտրել ըստ մեր հետապնդած նպատակին. այլ պարզապէս ներկայացնել այն վաւերաբուրքերը, որոնցմէ վստահ ենք: Օրինակի համար՝ երբ դիտարկուած մը դէպք մը կը նշէ կամ հիւստատու մը տեղեկագիր մը կը լլղէ, կրնանք վստահ ըլլալ. որ այդ փաստաթուղթը վաւերական է:

**Հ.** - Կր կարծէ՞ք, որ ոչ Հայերուն պէտք է ներկայացնել այն Հայերէն գրութիւնները, որոնք կը պատմեն Յեղասպանութեան արհաւիրքը:

Պ. - Շնորհակալ եմ, այս հարցումին համար. որովհետեւ ես այդ ուղղութեամբ կ'երթամ: Այսինքն կը կարծեմ, որ ուրացումին ամէնէն ժիտական հետեւանքներէն մէկը այն էր. որ հայերը, հակառակ իրենց ունեցած մեծաքանակ փաստերուն, մտածեցին որ «ոչ հայերուն արդէն իսկ չեն հաւատար, մեզի երբեք պիտի չհաւատան»: Հետեւաբար այդ բոլոր փաստերը, գրաւոր թէ բերանացի, ամբողջովին չգործածուեցան: Հիմա, որ վերադարձները այլեւ չկան, պէտք է շատ արագօրէն թարգմանել եւ հրատարակել նշեալ գրութիւնները, որովհետեւ անոնք կ'ամբողջացնեն տեղեկութիւնները:

Յեղասպանութեան մը մէջ երբեք «տիրապետ» կան. դանիւր, գոնը եւ վրան: Իհնիւր արդէն իսկ շատ չի խօսիր: Վկաներու արտաշատութիւններուն վրայ է. որ հիմնուեցաւ Յեղասպանութեան ճանաչումը: Վերադարձներուն, զոհներուն վկայութիւններէն փոքր մաս մը հրապարակուեցաւ: Կը կարծեմ, որ այս աշխատանքը հիմնական է, որովհետեւ զոհներուն վկայութիւնները ամբողջովին տարբեր մօտեցում մը կը ներկայացնեն:

Տրամագրութեան տակ ունիմ վերադարձի մը վկայութիւնը. ան 8-10 տարեկան էր Յեղասպանութեան օրերուն եւ կը պատմէ, թէ ինչպէս սպանուեցին իր հարազատները: Շատ կարեւոր է. որ այս յիտակները նաեւ ներկայացուին:

Յեղեկութիւններու այս ամբողջացումը անհրաժեշտ է Հայկական Յեղասպանութեան բոլոր երեսներու ուսումնասիրութեան համար: Յեղասպանութեան վերլուծումը տակաւին աւարտած չէ:

**Հ.** - Իսկ ի՞նչպէս կը կարծէք, որ պէտք է ներկայացնուին այն վկայութիւնները: «Ընդունելութիւններ» տարբեր հարց մը չկա՞յ այս պարագային:

Պ. - Ըստ իս, բաւարար չէ հայերէնով գրուած յուշերը թարգմանել ֆրանսերէնի. անգլերէնի, կամ այլ օտար լեզուի մը: Պէտք է գոյգ մօտեցում որդեգրել բնագիրը եւ մեկնաբանութիւնը: Անհրաժեշտ է. որ պատմաբաններ վերլուծեն եւ մեկնաբանեն բնագիրները. այս մօտեցումով է, որ կարելի պիտի ըլլայ հասկընալ եւ բացատրել Յեղասպանութիւնը: Խորքին մէջ այս աշխատանքին գծով հիմնական հարցը հրատարակութեան ծախսն է. որովհետեւ աշխատանքը միշտ պատրաստ է:

**Հ.** - Ի՞նչպէս կը պատկերացնէք Հայաստանի Հանրապետութեան դերակատարութիւնը՝ Հայկական Յեղասպանութեան ճանաչման գործընթացին մէջ:

Պ. - Տակաւին վերջերս Հայաստան կը գտնուէի թէ. այցեցեցինք Յեղասպանութեան բանագարան: Յետակ է. որ Հայկական Յեղասպանութեան ճանաչումը առաջնահերթութիւն չէ, այն իմաստով. որ այդ աշխատանքը կը իսկագրէ Թուրքիոյ եւ կամ Ազրայէյանի հետ յարաբերութիւնները: Կը կարծեմ, որ դերերու իսկական բաժանում կայ: Հիմնականիմ Հայաստանի Հանրապետութիւնը Թուրքիոյ եւ կամ Ազրայէյանի հետ իր յարաբերութիւններուն նախապայման պիտի չեղծէ Յեղասպանութեան ճանաչումը. չի կրնար: Միւս կողմէ, սակայն. Սփիւռքը շատ մեծ դեր կրնայ խաղալ եւ յստակ կեցուածք որդեգրել: Հայկական Յեղասպանութեան ճանաչումը բացարձակ անհրաժեշտութիւն մըն է:

**Հ.** - Ի՞նչ իմաստ կու տաք «Հայկական Յեղասպանութեան այժմեականութիւնը» արտաշատութեան:

Պ. - Յանախ փրանսայի մէջ երբ կը խօսինք Հայկական Յեղասպանութեան մասին, միշտ ալ կ'ըլլար մէկը, որ կ'ըսէր. «Հին պատմութիւն է, 85 տարի անցած է» եւ այլն: Ես կ'ուզեմ ըսել. թէ այնքան ատեն որ Յեղասպանութեան հարցը ճանաչումով չէ փակուած, անկախ կը մնայ այժմեական: Հայ Դատի Պաշտպան Յանձնարարութիւնը հրատարակած գրքին համար կատարուած պատմաբանական ուսումնասիրութիւնները ցոյց կու տան, որ այս հարցը որքան այժմեական է:

**ԱՍՑՀԻԼ**  
 ՀԻՄՆԱՆՈՑԱՅԻՆ ԱՊԱՐԿԱԳՈՒԹԵԱՆ ԻՐԱՑՈՒՄՈՒԹԵԱՆ ԱՏՈՒԿ

ԱՊԱՐԿԱԳՈՒԹԵԱՆ ԱՅԿՆԻՍ  
 ՍՕՏ ԿԸ ԱՍՆԱՍ ԱՆԵՒ ԼՕՏԻ  
 «Ա. ՊՈՒԼՂՈՒՐՃԵԱՆ»  
 ԸՆԿԵՐԱԲԺՃԿԱԿԱՆ ԿԵՂՈՒՆԵՒ  
 100 ԱՄԵՐԻԿԱՆ ՏՈՒՆԻ  
 ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ


**BANKERS ASSURANCE SAL**  
 NASCO & ASSOCIATES GROUP

**MedNet**

ԱՏՈՒԿ - ԱՅԿՆԻՍ ԶԵՆ, Ա. ՅՈՒՐԱ ԴԵՆ, 01/262231 - 01/242556-7



# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Կ



ՓԻՆԿ ՓՈՆԿ. ԼԻՐԱՆԱՆԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

## Հ.Մ.Ը.Մ. ԼԱԻ ԶԵՒՈՎ ՍԿՍԱԻ ԵՂԱՆԱԿԸ

Լիրանանի փինկ փոնկի տղոց խմբային ախտեանու- թիւեր սկսաւ երկէ: Մրցաշարին կը մասնակցին 12 խումբեր, որոնց շարքին Հ.Մ.Ը.Մ.: Մրցաշարքը կ'ըն- թանայ մէկ խմբակի դուրսեան: Վերջին երկու դրոշմ- րը գրաւող կազմերը կը փոխադրուին Բ- դասակարգ: Հ.Մ.Ը.Մ. երկէ 3 - 0 արդիւնքով տապալեց Լիււա Սայտան եւ Ըրնէթ Շահուանը: Վաղը, մեր տղաքը ժամը 8:00ին, ժամհուրի դէմ կը մրցին, իսկ 7:30ին՝ Քաֆար- շիմայի դէմ, Մոն Լա Սայի մէջ:

Աղջկանց ախտեանութիւերը կը սկսին 2 Մայիսին: Փինկ փոնկի մէջ Հ.Մ.Ը.Մ. միշտ ալ գրաւած է առաջ- նահերթ տեղ Լիրանանի տարածքին, աղջկանց թէ տղոց պարագաներուն հաւասարակ:

Պէտք է ամէն գնով տէր կանգնինք, բանիւ եւ գոր- ծով, որ փինկ փոնկի մեր խումբերը մնան ի պատու: Ըստ երեւոյթին այսուհետեւ առաւելաբար անհատ- կան նման մարզերու մէջ է (փինկ փոնկ, աթլետիզմ, հեծեյարչաւ, ճատրակ), որ Հ.Մ.Ը.Մ. պիտի մնայ առա- ջատար դիրքերու վրայ, հետեւաբար պէտք է քանակա- պահել մեր առաւելութիւնը միւսներէն:

Ասիկա առաջին հերթին կ'ենթադրէ, որ մեր համա- կիրները առաւելագոյն թիւով ներկայանան այս մր- ցումներուն եւ քաջաբերեն մեր տղաքն ու աղջկաները, որոնք ինչպէս ֆուտբոլն ու պասքեթպոլը, կարիքը եւ անշուշտ իրաւունքը ունին յարստական նեցուկ վայելե- լու: Զգանանք գոնէ այս մէկը անոնց:

## ԼԵՎԱՍԻ ՇԱՐԱԹԱՎԵՐՁԻ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ ԶԱՅՏԱԳԻՐԸ

Յառաջիկայ Շաբաթ օր, Լեւոն եւ Սոֆիա Յա- կոբեան քուէճի դաշտին վրայ տեղի պիտի ունե- նան Հ.Մ.Ը.Մ. ԼԵՎԱՍԻ յանձնախումբին կողմէ կազմակերպուած պասքեթպոլի մրցումները:

Ստորեւ՝ մրցումներու յայտագիրը, որոնք բո- յորն ալ տեղի պիտի ունենան Շաբաթ, 22 Ապրի- լին:

- Ս. Խանամիրեան - Յառաջ (միջակ աղջիկներ) 12:00ին
- Յառաջ - Եղիշէ Մանուկեան (մեծ տղաք) 12:45ին
- Ճեմարան - Նուպարեան (միջակ տղաք) 1:30ին
- Սոֆիա Յակոբեան - Ճեմարան (մեծ տղաք) 2:15ին
- Ճեմարան - Ս. Խանամիրեան (մեծ աղջիկներ) 3:15ին
- Ս. Հոյիսիմեանց - Սոֆիա Յակոբեան (միջակ աղջիկներ) 4:15ին
- Կ. Բ. Վ. - Մեարուպեան (մեծ աղջիկներ) 5:00ին
- Կ. Բ. Վ. - Արեւալեց (մեծ տղաք) 6:00ին

ԱԹԼԵԹԻԶՄ

## ԼԱԿԱԹ ՇԱՀԵՅԱԻ ՊՈՍԹԸՆԻ ՄԱՐԱԹՈՆԸ



Լակաթ կը հասնի ժամանակը գիծ

Քենիացի էլիա Լակաթ շահեցաւ Պոսթընի 104րդ մա- րաթոնը, երկէ:

Յաջողորարար 10րդ տարին է, որ քենիացիք կը տիրա- պետեն այս հուշակաւոր իրադարձութեան:

Երկրորդ հանդիսացաւ եթովպիացի կեցանքեան Լակ- րա, իսկ երրորդ նախապէս երկու անգամ այս տիտղո- սը շահած քենիացի Մոգրո թաւոնը:

27 տարեկան Քաթրին Ն'տերեպա շահեցաւ աղջկանց տիտղոսը: Յաջողորարար երեք տարի մրցումները շահած եթովպիացի Ֆաթոմա Ռոպա հանդիսացաւ երրորդ:

Այսպէսով, ափրիկեցիք փաստեցին, որ կը մնան մա- րաթոնի, այլ խոսքով՝ երկար վազքի անցերապանցելի վարպետները:

ԶԵՄՓԻՆԶ ԵՆԿ

## ԼԱՅԻՑ ԴՈՍԱ ԵՒ ԶԵԼՍԻ ԴՈՒՐՍ ՄՆԱՅԻՆ

«Զէմփիւրնյ Լիկ»ի քառորդ աւարտականի 4 հանդիպումներէն եր- կուքը տեղի ունեցան երէկ գիշեր. իսկ միւս երկուքը կը կատար- լին այսօր (մանրա- մասնութիւններ) ստո- ռել:

Լացիո Ռոմա իր դաշ- տին վրայ, 60 հազար համակիրներու ներ- կայութեան, թէեւ 1 - 0 յաղթեց շտրիի իտալի- վերոնի նշանակած կո- լին. սակայն դուրս մնաց մրցաշարքէ եւ Վալենսիա հասաւ կի- սաւարտականին, որոնք իր արձագանքով իր դաշտին վրայ 5 - 2 ար- դիւնքով լայն յաղթա- նակ մը արձանագրած էր:

Վալենսիա 1980ին ի վեր առաջին անգամն է, որ կը հասնի կիսա- արտականին: Ասիկա 1980ին շահած էր Եւրո- պայի բաժակակիր խումբերու բաժակը, որ այժմ դադրած է գոյու- թիւն ունենալէ եւ միացուած է Եւր. Է. Է. Ֆ. Ա. ի մրցաշարքին:

Օրուան երկրորդ մր- ցումը եղաւ շատ անելի տաք, հետաքրքրա- կան, ինչու ոչ նաեւ՝ տրամաբար: Պարսելո- նա յետ երկարաձգման 5 - 1 արդիւնքով յաղ- թանակ մը ապահովեց Չելսիի դէմ: Մրցումը աւարտեցաւ 3 - 1, հե- տեւաբար դիմուեցաւ երկարաձգման, որով- հետեւ Լոնոնին մէջ մրցումը աւարտած էր 3 - 1 արդիւնքով: 30 վայրկեանի ընթաց- քին, Պարսա նշանա- կեց 2 կող. շտրիի Ռի- վալտոյի (փենսիլի) եւ Բլուիվըրթի ու ապա- հովեց կիսաարտակա- նի տուսը:

90 հազար համակիր- ներու ներկայութեան կայացած այս ճակա- տումին 90 վայրկեան- ները, որոնք աւարտե- ցան 3 - 1 արդիւնքով, եղան վերիվայրումե- լով լեցուն: Ռիվալտո- յի վերջին վայրկեան- ներուն կորսնցուցած փենսիլիին պատճառ դարձաւ, որ մրցումը երկարաձգուի: Պար- սայի 3 կողերը նշանա- կեցին Ռիվալտո, Լուիս Ֆիլո եւ Տանի, մինչ Չելսիի «որք» կողը նշա- նակեց Թորէ Անտի- Յո, օգտուելով բեր- դապահ Հեւիլի անի- մաստ մէկ սխալէն:

Յամենայնդէպս կա- րելի է Պարսելոնան արժանի նկատել երէկ- ւան յաղթանակին համար, յատկապէս եր- կարաձգման ընթաց- քին իր տիրապետու- թեան ի տես:

### ԱՅՍՈՐՈՒՄՆ ԻՐՅՈՒՄՆԵՐԸ

«Զէմփիւրնյ Լիկ»ի ֆուտբոլի մրցաշար- քին քառորդ աւարտա- կանի դարձի մնացեալ երկու մրցումները տե- ղի կ'ունենան այսօր:

Այս մրցումներէն ետք ամբողջացած կ'ըլլայ անունները չորս խում- բերուն, որոնք ապահո- ված կ'ըլլան կիսաար- տական մրցումին իրենց տուսերը:

Եթէ երէկուան մր- ցումներուն պատկերը որոշ չափով մը յստակ էր, այսօրուան մրցում- ներուն պատկերը գրե- յիջ ամբողջութեամբ կը մնայ անորոշ, որովհե- տեւ երթի երկու ճակա- տումները, վերջ գտած են հաւասարութեամբ:

Երկու շաբաթ առաջ Մանչեսթըր Եունայ- թըրտ 0 - 0 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրած էր Ռեալ Մատրիտի հետ, այս վերջինին դաշտին «Սանթիակո Պէննա- պէտ»ի մէջ, մինչ Պա- յէրն Միւնիխ 1 - 1 ար- դիւնքով հաւասարու- թիւն մը Փորթոյի հետ, այս վերջինին դաշտին վրայ:

Եթէ պատահի, որ գերմանական կազմը, այսօր իր դաշտին վրայ նոյնիսկ 0 - 0 արդիւն- քով հաւասարութիւն մը արձանագրէ Փորթո- յի հետ, պիտի ապահո- վէ կիսաարտական մրցումին իր տուսը, որովհետեւ մրցումին երթին կող մը նշանա- կել օտար դաշտի վրայ, ինչ որ կը նկատուի առաւելութիւն մը:

Վստահաբար Պա- յէրն Միւնիխ պիտի չբարարարուի հաւա- րութեամբ եւ իր ամէն կարելին պիտի ընէ կող նշանակելու համար իր մրցակիցին բերդէն ներս: Պայէրնի մարպիչ Օթմար Հից- ֆելտ ինքնավստահ կը թուի ըլլալ եւ կը շեշտէ, որ իր կազմը պիտի յա- ջողի դուրս ձգել Փոր- թոն, հակառակ անոր, որ ունի բացակայ մար- վիկներ: Խումբին խըմ- տումին 90 վայրկեանի ընթացքին, Պարսա նշանա- կեց 2 կող, շտրիի Ռի- վալտոյի (փենսիլի) եւ Բլուիվըրթի ու ապա- հովեց կիսաարտակա- նի տուսը:

Պարպիչ Վիշենթե Տէլ Մարքի կազմը դաշտ պիտի ներկայա- նայ ամբողջական կազ- մով եւ առանց բացա- կաներու: Պարպիչի յետա- պահ Ռոպերթո Քար- լոս, որ վերջին երկու մրցումներէն բացակա- յած էր վիրաւոր ըլլա- լով, կը վերադառնայ այսօրուան մրցումին:

Մրցումին նախօր- րեան ներկայանալ: Էֆենսիլիի պաշտօնը պիտի փորձեն կատա- րել Եւս Տերեմի եւ Մեհմէթ Շոյ, իսկ Լիպա- րալուի պաշտօնը՝ Մի- քայել Թարնաթ:

Էֆենսիլի, որ շուրջ մէկ ամիս պիտի բացա- կայի դաշտերէն, անց- եալ շաբաթավերջին վիրաւորուած էր, մինչ Լիպարալու՝ այս շա- բաթակիցիցին:

Վերջին անգամ Ռեալ Մատրիտ «Օլտ Թրէ- ֆորտ» այցելած էր 1968ին եւ 1 - 0 արդիւն- քով պարտութիւն մը կրած Մանչեսթըրին Եւրոպայի բաժակի (այժմ՝ «Զէմփիւրնյ Լիկ») մրցաշարքին: Նոյն տարին անգլիա- կան կազմը շահած էր բաժակը:

Մրցումին իրաւա- րարն է Հիւնա Տալաս (Սկովտիա): Եւրոպայի ախտեան Մանչեսթըր Եունայ- թըրտ, պահելու համար իր տիտղոսը, այսօր անպայման յաղթանա- կի պետք ունի, երբ իր դաշտին «Օլտ Թրէ- ֆորտ»ի մէջ հիւրընկա- լէ Ռեալ Մատրիտը:

Մանչեսթըրի մար- պիչ Ալեքս Ֆերկըսըն ինքնավստահ կը թուի ըլլալ, որ իր մարպիչ- ները պիտի տան իրենց առաւելագոյնը եւ պի- տի ապահովեն կիսա- արտական մրցումին իրենց տուսը: Ան մտա- հոգում է միայն արտախաղի բերդա- պահ Մարք Պոսնիչով, որ անցեալ Շաբաթ օր Մանչեսթըրի դէմ տե- ղի ունեցած մրցումին ընթացքին վիրաւոր- ւեցաւ: Հակառակ անոր, որ ան շաբա- թակալիցին փորձեր կատարեց իր խմբա- կիցներուն հետ, սա- կայն այսօրուան մր- ցումին դաշտ ներկա- յանալու պարագային, ան պիտի փոխարին- ւի հոլանտացի Ռեմոն Վան Տէր Կուվով:

Մարպիչ Վիշենթե Տէլ Մարքի կազմը դաշտ պիտի ներկայա- նայ ամբողջական կազ- մով եւ առանց բացա- կաներու:

Պարպիչի յետա- պահ Ռոպերթո Քար- լոս, որ վերջին երկու մրցումներէն բացակա- յած էր վիրաւոր ըլլա- լով, կը վերադառնայ այսօրուան մրցումին: Մրցումին նախօր- րեան ներկայանալ: Էֆենսիլիի պաշտօնը պիտի փորձեն կատա- րել Եւս Տերեմի եւ Մեհմէթ Շոյ, իսկ Լիպա- րալուի պաշտօնը՝ Մի- քայել Թարնաթ:


Էֆենսիլի, որ շուրջ մէկ ամիս պիտի բացա- կայի դաշտերէն, անց- եալ շաբաթավերջին վիրաւորուած էր, մինչ Լիպարալու՝ այս շա- բաթակիցիցին:

Վերջին անգամ Ռեալ Մատրիտ «Օլտ Թրէ- ֆորտ» այցելած էր 1968ին եւ 1 - 0 արդիւն- քով պարտութիւն մը կրած Մանչեսթըրին Եւրոպայի բաժակի (այժմ՝ «Զէմփիւրնյ Լիկ») մրցաշարքին: Նոյն տարին անգլիա- կան կազմը շահած էր բաժակը:

Օրուան իրաւար- րը պիտի ըլլայ Փիեր- լուիճի Քոլինս (Իտա- լիա):

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

## ՕՐԼԱՆՏՕ ՄԵՃԻՔ ԶԿՐՑԱԻ ԳԱՍՆԻԼ ՓԼԵՅՕՅԻ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ



Օրլանտո Մեճիք - Միլուոքի Պաքս մրցումէն տեսարան մը:

Էն. Պի. Էյ. ի պասքեթպոլի մրցումներուն, Միլուոքի Պաքս 85-83 արդիւնքով պարտութեան մասնակէ ետք Օրլանտո Մեճիքը, եղաւ Արեւելեան շրջանի վերջին կազմը, որ ապահովեց փլէյօֆի մրցումին իր տուսը:

Միլուոքի իր յաղթանակը արձանագրեց շատ դժուար- րութեամբ, որովհետեւ միայն տարտը Օրլանտո Մե- ճիք յոյս ունէր յաղթելու մրցումը, վերջին հինգ երկ- վայրկեանին Չաքի Էնքիս ճախողեցաւ Մեճիքի ի նպաստ երեք կէտնց կողով մը նշանակել:

Միլուոքի յաղթանակը կէտողներէն մէկը եղաւ Կլէն Ռոպերթսը, որ մրցումին աւարտէն կարճ ժամա- նակ առաջ կարեւոր կէտեր նշանակեց ի նպաստ իր կազմին, հակառակ անոր, որ շատ յաճախ ճշուն կար- անոր վրայ մրցակից կազմին մարպիկներուն կողմէ,

կասեցնելու համար անոր յառաջխաղացքը: Իր այս կրած պարտութեան ետք, Օրլանտո Մեճիք չկրցաւ հասնիլ փլէյօֆի մրցումներուն: Ինտիանա Փէյլորը դժուարութեամբ պարտութեան մասնակէ Ֆիլատելֆիա 76րդը 92-90 արդիւնքով, սա- կայն երկուքին համար յաղթանակ կամ պարտութիւնը ալքթան ալ կարեւոր չէր, որովհետեւ արդէն իսկ անոնք ապահոված էին փլէյօֆի իրենց տուսերը:

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները. Միլուոքի Պաքս - Օրլանտո Մեճիք 85-83 Ինտիանա Փէյլորը - Ֆիլատելֆիա 76րդը 92-90 Սան Անթոնիո Սփրիք - Վանքուվըր Կրիպիդ 100-93 Միւնիսթերա Թիւրքոյուվյ - Կոլտրն Սթըյթ Ռոքիթրք 101-96

Պատարում (աստղանիշ կրող խումբերը ապահո- ված են փլէյօֆի տուսակը):

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇՐՋԱՆ	ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳՕՏԻ	ՅԱՎՈՒ	ՊԱՐՏ.
1. Մայնի Տիք (*)	51	29	
2. Նի Տորք Նիքս (*)	49	31	
3. Ֆիլատելֆիա 76րդը (*)	48	33	
4. Օրլանտո Մեճիք	40	41	
5. Պոսթըն Սթըյթ	33	47	
6. Նի Տերքի Նեքս	31	49	
7. Ուաշինգթոն Ուիլքարտ	29	51	

ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ԳՕՏԻ		
1. Ինտիանա Փէյլորը (*)	55	26
2. Չարլոթ Հորնեթս (*)	47	33
3. Թորոնթո Ռեփրթը (*)	45	35
4. Տիլթոնիք Փիլադելֆիա (*)	41	39
5. Միլուոքի Պաքս (*)	41	40
6. Քիվլէյնտ Քալիֆորնիա (*)	31	49
7. Արլանտո Սթըյթ Ռոքիթրք	27	53
8. Շիքախո Պուլ	17	63

ԱՐԵՒՍՏԵԱՆ ՇՐՋԱՆ	ԱՐԵՒՍՏԵԱՆ ԳՕՏԻ	
1. Եուրա Տէյ (*)	54	26
2. Սան Անթոնիո Սփրիք (*)	52	29
3. Միւնիսթերա		
Թիւրքոյուվյ (*)	50	31
4. Տայաս Սալթրիքս	38	42
5. Հիւսթըն Ռոքիթրք	33	47
6. Տենսիք Նակեթ	33	47
7. Վանքուվըր Կրիպիդ	21	60

ԻՆՎԱԿԱՆ ԳՕՏԻ		
1. Լու Անճելլա Լէյքըրը (*)	67	13
2. Փորթլենտ		
Թրէյ Պիլլըրը (*)	58	22
3. Ֆէօնիքս Սանիք (*)	52	28
4. Մարսանիքո Քիւնկ (*)	44	36
5. Սիէթլ Սուփըրսոնիքս (*)	44	36
6. Կոլտրն Սթըյթ Ռոքիթրք	19	62
7. Լու Անճելլա Քիլիքըրը	14	66

Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը. Պոսթըն Սթըյթս - Ուաշինգթոն Ուիլքարտ 85-83 Նի Տերքի Նեքս - Արլանտո Սթըյթ Չարլոթ Հորնեթս - Էլիվէյնտ Քալիֆորնիա Տիլթոնիք Փիլադելֆիա - Նի Տորք Նիքս Թորոնթո Ռեփրթը - Մայնի Տիք Ֆիլատելֆիա 76րդը - Շիքախո Պուլ Լու Անճելլա Լէյքըրը - Տայաս Սալթրիքս Եուրա Տէյ - Տենսիք Նակեթ Փորթլէյնտ Թրէյ Պիլլըրը - Լու Անճելլա Էլիվէյնտ Զիլիքըրը - Լու Անճելլա Էլիվէյնտ Զիլիքըրը - Սաքրամենթո Զիլիքըրը Սուփըրսոնիքս - Սաքրամենթո Զիլիքըրը

### ՌՈՒՍԻԱ ՆՈՐ ՌՈՒԺ ԿԸ ԿԵԴՐՈՆԱՑՆԷ...

Շարունակում Ա. Լ. Էլեկ

տուաւ, որ ուսուական ուժերը կը կուտին այն գիւղերուն մօտ, որոնք քստ Մոսկուայի յայտարարութիւններուն ուսուական բանակին հակակշիռին ենթակայ են: Ուսուական բաւ նաեւ, որ չեզն ուժերը պատերազմ յայտարարած են ուսու գիւնուորներուն դէմ, որոնք ծանր վնասներ կը կրեն յատկապէս՝ գիւղերային թակարդներուն պատճառով:

Մոսկուա, իր կարգին, կ'ըսէ, որ Չեչենիա կը հասնին վարձկան ուժեր, գինամթերք եւ այլ սթանդարտութիւններ: Նախագահական խորհրդատու Սերգէյ Եասմիրով ժամագրի գրասենեակը հաղորդեց, որ դէպի Չեչենիա շարժումներ նկատուած են Տաղստանի հարաւը Ազգային ճանի սահմանամերձ շրջաններուն մէջ: Նոյն աղբիւրին համաձայն, չեչեն ըմբոստ ուժերը կը ծրագրեն սթանդակ վարձկաններ ստանայ արարական երկիրներէ, ինչպէս նաեւ Փաքիստանէ:

Իրուս րարձրաստիճան պաշտօնատար մը յայտնեց, որ չեչեն ղեկավարները պատրաստութիւն կը տեսնեն հարեկական յանձնիր գործողութիւններու ձեռնարկելու:

### ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ՔԱԹԱՐ...

Շարունակում Ա. Լ. Էլեկ

Չականխողադուժներ, որ Սուրիոյ կամ Լիբանանի չի կրնար իրագործուիլ մեկուսացման փորձերով:

### ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅԵՐԸ ԵՎՈՒՈՐ ԵՆ

Շարունակում Ա. Լ. Էլեկ

Էլիպիկ ըսաւ, որ ինք գոհ է, որովհետեւ Թուրքիոյ կառավարական ընկերակցութիւնը պայքար կը մղէ ՔԱԿԻ եւ Թրքական Հրգայոյայի դէմ: Ան յայտնեց, որ Ազգային ճանի գորակցութիւն կը յայտնէ Թուրքիոյ:

Էլիպիկ չեչեն, որ Թուրքիոյ մէջ կը գտնուին մարդիկ, որոնք կ'ըսեն, թէ Ղարաբաղի կէսը կը պատկանի հայերուն եւ միւս կէսը՝ թուրքերուն: «Ասիկա անընդունելի է. հայերը այլ վայրերէ եկած եւ ընակութիւն հաստատած են Ղարաբաղի մէջ: Ոչ ոք կրնայ Ղարաբաղէն հող գիջիլ առանց Ազգային ճանի ժողովուրդին հաւանութեան: Մենք խղաղութեան կոչ կ'ուղղենք. երբ տագնապը խղաղ լուծուի չգտնէ, մենք գալն պիտի լուծենք պատերազմով», աւելցուց ան:

### ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ...

Շարունակում Զրոյ Էլեկ

Հաղորդագրութիւնը նկատել տուաւ, որ գինացողարի գիծը սահմանագիծ նկատելով՝ Խորալ կառչած կ'ըլլայ լիբանանեան տարածք, եւ իր միւս խուսանաւումները միջազգային ընտանիքին միջոցով կը փորձեն պարտադրել ազանովական կարգադրութիւններ, միաժամանակ իրարմէ անջատելով լիբանանեան ու սուրիական առանցքները:

Ասկէ մեկնելով հաղորդագրութիւնը մերժեց սահմանագիծի մէջ նոր ճշգրտում, նկատի առած որ սահմանները միջազգայնորէն ճանչցուած են, ՊՅՄԻ կամ գինացողարի սահման գոյութիւն չունի, իսկ 1967էն Խորալ լիբանանեան իրարմէ կ'ընտանեան 100 քառ. քմ. հող, յատկապէս Մագարէ Երպան, Ժապալ Ելիսի եւ Ժապալ Հարամունի մէջ տարածքներ եւ ակեր, մինչեւ Հասպանի:

Հաղորդագրութիւնը նաեւ վերահաստատեց հողամբողջականութեան վերատիրանալու համար դիմադրութիւնը շարունակելու իրաւունքը, մանաւանդ որ ՄԱԿի թիւ 425 որոշումը գործադրութիւնը կ'ենթադրէ ստուգել, որ հեռացումը կատարուած է մինչեւ միջազգայնորէն ճանչցուած սահմաններ:

Հաղորդագրութիւնը նաեւ պարմանք յայտնեց ներքին ըմբի վրայ կատարուած այն յայտարարութիւններուն համար, որոնք կասկած կը սփռեն այս գարգացումներուն նկատմամբ պաշտօնական կեցուածքին վրայ, եւ կը փորձեն սատարել Խորալ լիբանան, մինչ հանրապետութեան նախագահին եւ կառավարութեան կեցուածքները ժողովրդային կամքը արտայայտելով հաստատ կը մնան սկզբունքային կէտերուն վրայ: Հաղորդագրութիւնը պահանջեց սահման դնել ազատութեամբ քողարկուած կասկածելի այդ ձայներուն:

Ժողովրդեան բարձր գնահատեց նախագահ զոր էմիլ Լահուտի շրջապատյուն ու անոր ընթացքին յայտարարուած ազգային կեցուածքները:

### ՆԱԽԱԳԱՀ ՂՈՒԿԱՍԵԱՆ ...

Շարունակում Ա. Լ. Էլեկ

Ղուկասեան կ'եզրակացնէ, ըսելով. «...Յանկանում եմ հաստատեցնել ձեզ, որ տեղի ունեցած ռճագործութիւնը չի կարող յախտել ԼՂՀ-ում օրէնքի թերակայութեան հաստատման ուղղուած իմ մտադրութիւնները»:

### ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԼՂՀի նախագահի մամուլի գրասենեակը հաղորդեց, թէ նախագահ Ղուկասեանը դարմանող բժշկներու որոշումով Ղուկասեան երէկ անգամ մը եւս վիրաբուժական գործողութեան ենթարկուեցաւ, ձախ ոտքի ու կրի աճին համար պայմաններ ստեղծելու համար:

«Միջբալչեան» հիւանդանոցի տնօրէնութիւնը հաստատեց, թէ նախագահին միւս ոտքին վիճակը բարար է, սակայն հաշտի առնելով վերքերու բուժումը, վերջնական ապահովման համար կը պահանջուի առնուապէս քանի մը ամիս:

Նոյն աղբիւրին համաձայն, այս մէկը մահափորձէն ետք երրորդ վիրաբուժական գործողութիւնն է:

### ՀԱՆԿԻՊՈՒՄ՝ ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ՀԵՏ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Արկաղի Ղուկասեան, որ Երեւանի մէջ կը բոլորեց ապաքինման շրջան մը, երէկ հանդիպում մը ունեցաւ հայրենի լրատու աղբիւրներու ներկայացուցիչներու հետ:

Հանդիպումին նախագահ Ղուկասեան լրագրողներուն հետ կարճատեղ փոխանակեց 22 Մարտին իր դէմ կատարուած մահափորձէն ետք ստեղծուած իրավիճակին եւ մահափորձին շուրջ բացուած քննութեան առնչուող հարցերու մասին:

Նախագահ Ղուկասեան հաստատեց, որ ԼՂՀի իշխանութիւնները պիտի շտեղծեն որոշուած բարեփոխումներու ուղիք, եւ թէ ստեղծուած ծանր իրավիճակէն արցախահայութիւնը դուրս պիտի գայ աւելի գոտակալուած:

### ԽԱՉԲԱՆ ԹԻՒ 4543

Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՂԱՋԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

- | ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ                                                 | ՈՒՂԱՀԱՅԵԱՑ                                                       |
|-------------------------------------------------------------|------------------------------------------------------------------|
| 1. Փոփրեմ, անմեռուկ - Այրուրենէն:                           | 1. Փորթուկայեան նախկին գաղութ Հնդկաստանի մէջ - Դատական կոչնագիր: |
| 2. Հիւսիս գործիքներէն - Կտակագործութեան թել:                | 2. Եկեղեցականի զգեստի մաս - Երուսաղէմի տարրեր անուանումը:        |
| 3. Հաստիչ - Փարկսի եղբայր:                                  | 3. Շահանդուխտի երկերէն:                                          |
| 4. Տուռն - Սառայէ ծնած Արրահամի որդին:                      | 4. Էրգրում - Այրուրենէն - Հոյովակերտ մասնիկ:                     |
| 5. Երջանիկ, բախտաւոր - Ճափոնական օղանաւային ընկերութիւն մը: | 5. Ուրուական - Յետմիջօրէն:                                       |
| 6. Հսկայ, վիթխարի:                                          | 6. Ամերիկեան երկիր - Լ. Օ. Խաչի մասնաճիւղերէն:                   |
| 7. Արամէացիներէն սեբաթ ժողովուրդ - Որթատունկի պարտէզ:       | 7. Ժամանակի միաւոր - «Գիւղերէն Մինչեւ Լուսաբաց» երկին հեղինակը:  |
| 8. Առաջին մարդասպանը - Նոյն գիրքը - Կիսուած թաղանթ:         | 8. Պաղեստինեան քաղաք - Ուրիշ տեղ:                                |
| 9. Ասեղի ծակ - Կանացի կոչական բառ - Հնձուած գործնի խուրձ:   | 9. Կուսակցութիւն - Եզրակական ղից:                                |
| 10. Ժխտական բառ - Խնարհ:                                    | 10. Խումը կամ շարք - Նշանակութիւն:                               |
| 11. Կոնարբը մշտողաբար ծառ - Լեզուով մը՝ այր:                | 11. Խոսքի մասերէն - վերտի սփերաներէն:                            |

ԹԻՒ 4542

1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Ջ	Ա	Ջ	Ր	Ա	Հ	ՈՒ	Տ	Ս
2	Ա	Կ	Ա	ՈՒ	Ն	Ր	Ե	Ս	Ա
3	Ն	Լ	Ն	Ա	Ս	ՈՒ	ՈՒ	Ա	Ս
4	Գ	Ա	Գ	Ի	Կ	Ս	Ե	Ր	Տ
5	Ի	Ր	Ե	Լ	Ա	Ս	Ա	Ա	Ր
6	Կ	Կ	Ջ	Լ	Կ	Կ	Կ	Կ	Կ
7	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե
8	Ա	Լ	Ե	Ա	Կ	Օ	Ր	Ի	
9	Յ	Ա	Ա	Ե	Լ	Ի	Թ	Թ	
10	Տ	Ի	Ր	Ա	Օ	Ր	Տ	Ա	

ԽԱՉԲԱՆԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ



**1.050 L.L.**



**750 L.L.**



**530 L.L.**



**2.690 L.L.**



**ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ ԿԸ ՆՇԱՆԱԿԵ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ MASTER MALL**



**1.550 L.L.**



**1.910 L.L.**



**2.550 L.L.**



**14.580 L.L.**